ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» Հունվար 2015թ. N 18

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.19 կետի ա ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցին նվիրված միջոցառումների իրականացման ծրագիրը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի 2015 թվականի 06 Դեկտեմբերի

N 18 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Լ.Մուրադյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Մանուկ Սիմոնյան - ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական

Արսեն Ղուկասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Գայանե Սայադյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Ծաղկանուշ Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Հերմինե Վարդանյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Հովհաննես Պետրոսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների հարցերով բաժնի պետ